ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետարանի մրցութային հանձնաժողովը հայտարարում է Ստեփանակերտ քաղաքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր երթուղիների համար

Հ/h	Երթուղու համարը	Երթուղու անվանումը	Պահանջվող ավտոբուսի	
			Դասը	Քանակը(ներառյալ պահուստային ավտոբուսների)
1	12	Մարշալ Բաղրամյան նրբանցք – Հաղթանակի հրապարակ (երթակարգավարական կետ) -Մարշալ Բաղրամյան նրբանցք	Հատուկ փոքր	4
2	15	Արեշ թաղամաս – Հաղթանակի հրապարակ (երթակարգավարական կետ) - Հանրապետական Հիվանդանոց	Հատուկ փոքր	5

Ց Ա Ն Կ
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ.
2.Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
3.Տրանսպորտային միջոցի՝ հաշվառման վկայագիր, սեփականության իրավունքի վկայական կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթեր.
4.Վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր.
5.Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի փոխադրման գինը:

Մրցույթը կկայանա 2019 թվականի մարտի 01-ին՝ ժամը 10:00-ին, ք. Ստեփանակերտ, Նաբերեժնայա 3 հասցեում:

Մրցույթին մասնակցելու ցանկություն հայտնած կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը մրցույթի մասնակցության հայտը և պահանջվող փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնեն Արցախի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմ՝ ԱՀ, ք.Ստեփանակերտ, Ն.Ստեփանյան 22 հասցեով:

Մրցույթի մասնակցության հայտերն ու պահանջվող փաստաթղթերը ընդունվում են մինչև 2019 թվականի ներառյալ փետրվարի 22-ը՝ աշխատանքային օրերին և ժամերին:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են զանգահարել (047) 94-15-02 հեռախոսահամարով: